

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Մեր նախարարութիւնները «աւատական իշխանութիւն» կոչեցինք։ Եւ յիշաւի այդ երկու հաստատութիւնները աւատականութիւնը և մեր նախարարութիւնը յար և նման են միմեանց, եթէ չասենք որ միեւնոյն են իւրեանց կազմակերպութեամբ։

Երկուսն էլ ունէին սեփական ժառանգական երկիր, զօրք և հաւանօրէն և՛ մեր նախարարութիւնը իւր հպատակների բարձրագոյն պետն ու դատաւորն էր։ Մեր նախարարութիւններն ևս, ճանաչելով Հայոց արքաներին իբրեւ վեհապետի՝ souverain-ի մնում՝ են, դոնեա գլխաւորները, գերիշխան՝ suzerain, ունենալով իրենց գերիշխանութեան տակ այլ նախարարութիւններ։ Եւ այս ոչ միայն իրենց տոհմի երկրորդ, երրորդ և «այլ» կամ՝ «միւս» կոչուածները¹, որոնք անտարակոյս ենթարկուում էին ցեղի

1 Վաւարական դահնամակն ունի 1. Ա. Սիւնեաց տէր, ԻԸ, Սիւնեաց երկրորդն։—2. Գ. Արժրունեաց տէր. ԻԹ, Արժրունեաց երկրորդն. Լ. Արժրունեաց երրորդն։—3. Գ. Մամիկոնէից տէր. ԼԱ, Մամիկոնէից երկրորդն։—4. Անձաւացեաց տէր. ԺԸ, Այդ Անձաւացի։—5. ԺԱ, Ապահունեաց տէր. ԺԳ. Այդ Ապահունի։—6. ԺԳ, Վանանդացին. ԿԳ, Վանանդացին երկրորդն։—7. ԻԷ, Արեղէնից Տէր. ԼԶ, Այդ Արեղեանն։—8. ԼԴ, Դիմաքսեանն. ԼԵ, Բախա Դիմաքսեանն. ԼԶ, Այդ Դիմաքսեանն. ԿԷ, Շիրակա Դիմաքսեան։—(Դ. Ալիշան, Այրարատ էջ 430—431)։—9. Ծովք (Սոփերք 2, Ե, էջ 32) կամ զօրանամակի Ծովացին ունի երկու անջատ նախարարութիւն իւր առանձին իշխաններով «Մեծ Ծովք և Ծովք կամ Միւս Ծովք և կամ Ծովք Շահէի կամ Շահունի Ծովք» (Փ. Բաղ. Գ, Թ, էջ 21, Գ, Ժք, էջ 29. Գ, դ, էջ 72—73. Դ, իդ, էջ 146)։ Սոփերք 2, գ, էջ 30 և 25, որտեղ Վարադդ Շահունի=Վարադ Շահունի, ևս 2, ա, էջ 11 և 2, ը, էջ 53։—10. Առաւելեան նախարարութիւնն ևս գէթ մի երկրորդ

նահապետին կամ տանուտէրին, ինչպէս այսօր Մակուայ խանութեան մէջ է, այլև բոլորովին տարբեր տոհմեր: Արծրունիք, Հայաստանի չորս գլխաւոր նախարարութիւններից մինը, ունէին դեռ Ե. դարում իրենց ցեղի ստո-

ճիւղ ունեցել է. «ի տոհմէն առաջին Առաւելէնից» ասում է Ղ. Փարպեցին Բ, խէ, էջ 86:—11. Պալունիք ևս երկու են, ինչպէս դաւառը կամ երկերը, այնպէս էլ նախարարութիւնը, մինը Վասպուրահանում, միւսը Տարօնում (Հ. Հիւրշման Altarm. Ortsnamen Դ, ք, 95, էջ 345):—2. Արծրունեաց Ե դարում մի երկրորդ ճիւղ լինելուն ապացոյց են և Ղ. Փարպեցի Բ. խք, էջ 75 և Բ, խէ, էջ 86. Հրաք. Ս. Էջմիածնի. Տիկիս 1904: Հմմ. Եղիշէ Ը, էջ 310—311. այլ Ե. էջ 153—154. Թէոդոսիա 1861: Իսկ իններորդ դարում այդ երեւում է Թ. Արծրունու պատմութիւնից ակներև կերպով:—3. Մամիկոնեանք Դ. դարում ունին երկու «տուն», մինը բուն երկիրը Տայք, միւսը «այլ տուն» (Փ. Բուզանդ Դ, Ժք, էջ 47): Որ այստեղ տունը միայն կալուածք չէ նշանակում, այլ և նախարարութիւն, ցեղի մի երկրորդական ճիւղ, այդ երեւում է Խոսրովեան գահնամակից. ըստ Մ. Երէցի Մամիկոնեանք 10-րդ տեղումն են, ըայց ունի և «Մամիկոնք երկրորդ» 80-րդ տեղում (Սոփերք 2, Ե, էջ 32—35):—4. Անձեացոց երկրորդ ճիւղ լինելուն ապացոյց է և սոցա Պաղէստինում շինած վանքերը «Անձեացեաց վանքն, որ յանուն Ս. Անանիայ մերձ ի Բեթղէհէմ» և «Այլ Անձեացեաց վանքն» Դաւիթիոյ կողմը Աստուածատուր Եպիսկոպոս Տէր-Յովհաննէսեանց Պատմ. Ս. Երուսաղէմի I, ԺԱ, էջ 91—92. Երուսաղէմ 1890):—5. Դիմաքսեան երեք ճիւղ լինելուն ապացոյց ունինք և Եղիշէի պատմադրութիւնը, որոնց նախարարները ջոկ ջոկ յիշուած են, ուր կան ըացի երկու Արծրունի տոհմերից, երեք Դիմաքսեան, 27 նախարարներից է. Թաթուլ Դիմաքսեանն է, ԺԴ, Հմայեակ Դիմաքսեան, ԺԵ, Միւս ևս այլ Դիմաքսեան (Եղիշէ Ե, էջ 153—154), իսկ որ Բուխա Դիմաքսեանը զօրանամակի Հիւսիսային դռան ԺԵ, Բոխայեցին է (Շահխաթունեան I, § 382, էջ 58-ի և 59-ի միջև) այս յօդուածի վերջում կը տեսնենք: Այս բոլորից յետոյ մեզ անհիմն է թուում Ի. Ջալալօղլի կասկածը, թէ Վաւազեան գահնամակը կեղծիք է (Государственный Строй Древней Грузии и Древней Армении I, էջ 120—121. С.-Петербург 1905. Հմմ. Դ. Խալաթեանց Армянские Аршакиды, էջ 294—299, Москва 1903):

բարձրագույն մարմիններ, թ. դարում ունին նոյնը, որոնք կէսանկախ են, բայց միևնոյն ժամանակ բոլորովին տարբեր և այլ հպատակ նախարարութիւններ: Հռիփսիմէի որդի Աշոտ Արծրունին իւր Գուրգէն և Գրիգոր եղբայրների, այլև Արծրունի ցեղակիցների հետ գնում են իրենց քեռի Տարօնոյ Բագրատ Բագրատունուն օգնութեան Մուսէի գէմ: Նոցա հետ գնացին «և այլք ի նախարարաց Վասպուրական իշխանին»¹:

1 Ահա այդ տոհմերը, «Սմբատ Ապահունի, Գրիգոր Բազբե-
րունի, Վահան Հաւնունի, սեպուհն Դաւիթ, Գազրիկն Ապուհա-
բագ (մակդիր թէ տոհմ»), Թողորոս Վարազի (=Վարազ), Խոսրով
Վահնունի, Խոսրով Ակեացի, Վարդան Գաբայեղէն, Սմբատ
Մարացեան, սեպուհն մի Սահակ, Պատրիկն Անճեւացի, Գորգ
Հարմացի (Բարմայե»), Դաւիթ Գունդսաղար, և այլ բազում յա-
զատ տանէ թ. Արծրունի Բ, զ. էջ 109: Միևնոյն էջում թ.
Արծրունին յիշելով սոյն պատերազմի մասնակցող տասնուվեց
Արծրունի իրենց զօրքով, անմիջապէս կցում է. «եւ ի տանէն
Բագրատունեաց Թոռնկայ որդի զօրք իւրովք, ի տոհմէն Ամա-
սունեաց Շապուհ Ը. հարազատօք և զօրովք իւրեանց, ի տոհմէն
Փնունեաց Գրիգոր որդի Հազրի Զ. այլ ևս հարազատօք և զօրք
իւրեանց, ի տոհմէն Լիսնունեաց Արտաւազդ է, հարազատօք
զօրք իւրեանց: Որ վերջիններս անկախ չեն, այդ երեւում է
այն հանգամանքից, որ երբ Գազիկ Ապուհրուանը Գրիգոր Դե-
րենկի որդոց Աշոտին՝ իւր փեսային ու Գազիկին ու Գուրգէնին
բանտարկում է, «Յիսէ Տրունեաց տէր որդի Հոնաւարաց, Վա-
րազշապուհ Աբելիցից տէր, Թագէոս Ակեացի Շերեփայ որդի,
և այլք ընդ նոսա» դիմում են նախ Գուրգէն Ապուհելէ Արծ-
րունու որդի Գուրգէն Ա-ին կամ Մեծին «գտանել զելս իրացն»
բայց դրանից դժգոհ՝ Թողեցին ընտանիքով իրենց տները, հայ-
րենիքը և գնացին Համիդի տէր Ահմաթ օտար իշխանի մօտ
լաւազոյն համարելով պանդուխտ և օտարութեան մէջ լինել,
քանի՜ տեսնել բանտարկուած իրենց իշխանի որդոց, այս աշ-
խարհի իշխանին, որոնք «որտի մտօք ի մանկութեմ գնարկ ծա-
ռայութեան հասուցեալ էին ըստ օրինի վայելչութեան հնազան-
դողաց, ըստ յորդորման հեթանոսաց վարդապետին» (թ. Արծր.
Գ, իբ, 235—236): Պօղոս առաքելոյ սահայն ակնարկած յայանի
պատուէրի հակառակ «նահապետք ազատաց Վասպուրական
իշխանին (Աշոտոյ)՝ Մուշեղ ի ցեղէ Վահնունեաց, Վահրամ

Շեշտելով այս նմանութիւնները և մանաւանդ յատկապէս վերջին կէտը, որ ցարդ անուշադիր է թողնուած, դառնանք կալուածական խնդրին:

Ամբողջ Հայաստանը բաժանուած էր նախարարութեանց, որոնք ունէին իրենց սեփական դաւառները, աւանները և գիւղերը և ազարակները, որ մեր բազմաթիւ նախարարութիւնները նախ խոշոր և մանր կալուածատէրեր էին, թագաւորն ինքը խոշոր և ամենամեծ կալուածատէրն էր, և այդ այնպէս այնքան հին է, որ Հայաստանի դաւառների և նախարարութեանց շատ շատերի մանաւանդ հնագոյնների անունները նոյն են, այնպէս որ Խորենացին «զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցունց զուստն և զղիարդն յայտնելով համառօտ»¹ Ռշտունեաց և Գողթնեցոց մասին ասում է, «Գտի պատմեալ ի սիսականէն արդարեւ հատուած. ոչ գիտեմ, թէ յանուն արանցն զգաւառն անուանեն, և թէ (=եթէ) յանուն գաւառացն զնախարարութիւնսն կոչեցեալ»²:

Արդ որն են Մամիկոնեանց կալուածքները. Փ. Բուզանդացին պատմում է, թէ ինչպէս անօրէն և գիւահար Հայր մարդպետը Խասրով կոտակի որդի Տիրան թագաւորին գրգռեց նախարարների ազգերի դէմ և շատերին քսութեամբ կոտորել տուաւ: Մանաւանդ «երկու աւագ տոհմերը» Ռշտունեաց և Արծրունեաց ուղեց «անգունդ» ածել տալ: Մեհենդակ Ռշտունու Տաճատ և Վաչէ Արծրունու Շաւասպ որդուն փախցրին Արտաւազդ և Վասակ Մամիկոնեան զօրավարները այնտեղ հանդիպելով «և գնացին ի բաց ի բանակէն արքունի. եւ չոգան յաշխարհն

յաղգէ Տրունեաց, Վահրամ միւս ևս, որ և բիկնապան իշխանիս և այլ դունդը աղատաց և զօրական պետութեանց» (Թ. Արծր. Գ, բ, 134) մատնում են Աշոտին Բուզայի ձեռքը: Արծրունի տոհմերի ըստ ազգոս ազգոս մասին տես ևս Թ. Արծր. Գ, ժբ, 191, իսկ «բազմութիւն աղատաց և մեծամեծացն Արծրունեաց նախարարութեանց» տես Թ. Արծր. Գ, գ, 143:

1 Մ. Խոր. Ա, ա, 4. Վենետիկ:

2 Մ. Խոր. Բ, բ, 80:

իւրեանց յամուրս Տայոց, և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց, և թողին զայլ տուն իւրեանց»¹։

Արշակ Բ. Թագաւորելով ելնում է ի խնդիր «տոհմին զօրավարաց ազգին քաջացն Մամիկոնեանից, մանաւանդ զի իւր գայեակը և սնուցիչք էին. Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին», և դարձնում է նոցա յընդանութիւն, զի պառակտուած և քակտուած էին ընդանութիւնից և Հայոց բոլոր գործերից Տիրանի խօլութեան այսինքն գծութեանց ժամանակ։

Այս Մամիկոնեանեաներից էին, ինչպէս յիշում է Փաւստոսը, Վարդան երէց եղբայր, որին նահապետ է կացուցանում և Վասակ, միջնեկը, որին սպարապետ է կարգում։ Արդ այս Վարդանը, «Մամիկոնեան տոհմի տա՛նուաւէրը» և «Նահապետը» ճապուհ արքայից արքայի հրովարտակը բերում է Արշակին, որ նորան յորդորում էր հնազանդելու մոռանալով անցեալը։ Արշակը սիրով լսում է պատգամին, հաւանում է ասածին «Եւ խաղաղութեամբ արձակէր զմեծ Նահապետն ի տուն իւր, զի երթիցէ հանգիցէ յաշխատութենէն յերկայն ճանապարհէն. և գնաց»։ Տիրաւէր Վասակը, մանաւանդ և թագաւորի կէն սխալալ Փառանձեմը, զրգռում են Արշակին Վարդանի գէմ, և ինքն իսկ Վասակը զօրքով գնում է հարազատ եղբօրն սպանելու։ «Ապա երթեալ գտանէին զնա յիւրդում գաւառին ի Տայս², յիւր ամուր բերդին որում անուն էրախանի³ կոչի»։

1 Փ. Բուզ. Դ. ժը, 47, Վենետիկ 1889:

2 Փ. Բուզ. Դ. ը, 67: Սոփերք, 2, ը, էջ 16. Մ. Երէցն աւելացնում է «ընդ նոսին և զԳնունիքն»:

3 Փ. Բուզ. Դ. ժը, 131—132:

4 Այս ձևն է ճիշտ և ոչ միւս փոփոխակը Ախանի. որովհետեւ այնոր էլ կայ այդ «ամուր բերդը» և գտնուում է ձորտնի տիւն, Օլթի-չայի և վերինի խառնարանից ներքե, և կոչուում է Իրեան, ինչպէս այդ հաստատում է Կիպերտը. տես նորա Տրապիզոնի աշխարհացոյց քարտէզը: Հմմ. H. Hübschmann. Die Altarmenischen Ortsnamen, IV, § 162—360:

Որ Տայքը Մամիկոնեանցն է եղել և ե. դարում, այդ երևում է եղիշէի, մանաւանդ Ղ. Փարպեցու խօսքերից և վկայութիւններից: Վերջինս պատմելով թէ ինչպէս Հմայեակի սրգիքը Վահան, Վասակ և Արտաշէս Վրաց Աշուշայ բղիշի ձեռքով ազատուելով սնուում և կրթուում են Վրաստանում իւրեանց մօր Զուիկի խնամքի տակ, որ մնում էր քոյր Անուշ-Վաամի՝ Աշուշայի կնոջ մօտ, աւելացնում է. «Բայց էր նոցա միւս ևս եղբայր կրտսեր, անուն Վարդ, որ էր մնացեալ տղայ ի դայեակս իւր ի Տայս»¹: Այժմ պէտք է հասկանալի լինի, թէ ինչու Վարդանանց պատերազմին Աւարայրի մեծ ճակատամարտից յետոյ 451-ին «Հայոց փախստականների բաղմութիւնը նախարարներ և սեպուհներ, ոստանիկներ և ռամիկներ, դիմելով Տայոց նրկիրը ժողովուում էին սուրբ Վարդան զօրավարի եղբօր Հմայեակի մօտ, որ ուշացել էր Յունաց աշխարհում»²: Եղիշէի ասելով Հայերից, որոնք ամրացել էին «Խաղդեաց լեռներում»³, երբոր տեսան թէ Պարսկաց զօրքը յանդդոնաբար և աներկիւղ իջնում էին Հայոց աշխարհի ամրութիւնները, նոքա ևս մեծ զօրութեամբ յարձակուեցան Տայոց Չորագաւառը: Եւ այնտեղ գտան արքունի զօրքից մեծ գունդ, որոնք կամենում էին առնել այն աշխարհի ամրականներին. դարձեալ և կարծում էին էլ թէ նախարարների (անշուշտ Մամիկոնեանց) գանձերն այնտեղ են, ուստի անխնայ յուղում (=խուղարկում) էին վայրերը»⁴: Եւ դարձեալ երբոր Հայերը տեսան էլ այնտեղ նրկու⁵

1 Ղ. Փարպ. Գ, կը, 111, Հրատարակութիւն Ս. Էջմիածնի 1904, Տփլիս:

2 Ղ. Փարպ. Բ, խա, 73:

3 Խաղդեաց սահմանակից այդ լեռները Ղ. Փարպեցին կոչում է Պարխար (Ղ. Փարպ. Բ, խա, 74—75): Այդ լեռների մի մասն անշուշտ Տայքի մէջ է, ուր փախչում է Վահանի որդի Հայրասպան Սամուէլ Մամիկոնեանը «եւ ինքն փախստական լինէր յերկիրն Խաղդեաց» ասում է Բուդանդը Գ, ծթ, 184:

4 Եղիշէ է, 199, Թէոդոսիա 1861:

5 Կարծես թէ Եղիշէն երկու գիւղ ասելով շփոթում է

գիւղում եկեղեցիներն այրուած, բարկացան, յարձակուեցան, կոտորեցին շատերին նոցանից և փախցրին այն աշխարհից, եւ այնչափ յանդուգն յարձակումնքից ընկաւ քաջութեամբ միայն երանելի Հմայեակը, Հայոց սպարապետ Վարդանայ եղբայրը, Փարպեցին այդ գիւղը, ուր ընկաւ նահատակ Հմայեակը, անուանում է «Որջնհաղ¹, ի գաւառին Տայոց»։ Այսպէս էլ եւ, դարու վերջին քառորդին, երբ հայերը և Վահանը Սահակ Բագրատունուն «Հայոց մարզպան են կարգում» և Վահանն էլ հայերից ընդունում է «Մամիկոնեանց տէրութիւնը և Հայոց սպարապետութիւնը»², տեսնելով որ իրենց զօրքը դեռ ևս անկազմ և անպատրաստ է, «խորհում են առ վայր մի չուել Տայոց գաւառի ամուր տեղերը»։ Սոյնպէս ձարմանայնու³ դաշտի ճակատամարտից յետոյ Վահանը «առ վայր մի գնում է Տայոց ամուր տեղերը, ուր նորա մօտ ժողովուեցան Հայոց փափստական սինլքորները և ուրիշները Հայոց աւագ նախարարներից, իսկ երկու կամսարականները միշտ էլ նորա հետ էին, նորանից անբաժան և միաբան»⁴։

Արդ Տայքը Փ. Բուզանդը վերեւ Մամիկոնեանց «աշխարհ» և Վարդան Մամիկոնեանց նահապետի «գաւառ» անուանեց, Այս խօսքերի վրայ հիմնուած ուսուցչապետ Հիւրչմանն ասում է թէ այս ամբողջ նահանգը Գ. դարում Մամիկոնեանց է պատկանում⁵։ Առհասարակ մեզ-

Հմայեակի նահատակութեան գիւղը, որ ըստ Փարպեցու Որջնհաղն է, Վահանի ժամանակի անցքերի հետ։ Հաղարաւուխտը ընկնելով Վահանի ետեւից և երթալով Տայոց Որաղ գաւառը «բանակում է այն գիւղերի մօտ, որի անունն էր մէկին Գիւղիկ և միւսին Վարդաշէն» Դ. Փարպ. Գ, հթ, 145։

1 Դ. Փարպ. Բ, խա, 74։

2 Դ. Փարպ. Գ, կը, 121։

3 «Գաշտն ձարմանոյ» Օրբէլեան Պատմ. Ժէ, 46։ Մոսկվա 1861։ «ձարմանու հովիտն» Սիմէոն Ապարանցւոյ վիպասանութիւն էջ 60, Վաղարշապատ 1870։

4 Դ. Փարպ. Գ, հե, 135։

5 Die Altarm. Ortsnamen. III, 14. էջ 276։

նում այն կարծիքն է տիրում, թէ մեր նահանգներից կամ գաւառներից մինը սեփականութիւն է ամբողջապէս այս կամ այն նախարարական տան: Հաւանօրէն այդպէս էր նախնական ժամանակներում: Բայց որդէն Գ. դարումսին այդ բանը չէ կարելի պնդել: Իսկ այնուհետեւ առաւել ևս: Մի կողմ թողնելով Արարատ նահանգը, որ Արշակունեաց «բնիկ ժառանգութիւնն»¹ էր, որի մասին ուրիշ առթիւ խօսելու ենք, դասնանք միւս նահանգներին և գաւառներին: Ծովաց աշխարհը կամ Զորրորդ Հայքը, որի նահանգները ըստ Վռամական գահնամակի զ. գահն² էր կազմում, երկու համանուն ցեղակից նախարարութիւն ունէր «Ծովք մեծ . . . Ծովք Շահունոց»³, կամ Շահէի⁴ կամ միայն Ծովաց⁵ և կամ «միւս Ծովք»⁶, որոնք ջոկ ջոկ իշխաններ ունէին. Այլև այդ նահանգում

1 Դ. Փարպեցին Արշակ Գ-ի համար ասում է «Արշակ թագաւորն . . . Թողոյր զբարի և զբնիկ ժառանգութիւնն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատ, զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն . . . » Ա, է, 9: Իսկ Կորիւնը ս. Մեղրոպի համար ասում է «Մաշթոց անուն, ի Տարօնական գաւառէն . . . եկեալ հասեալ ի գաւառն Արեւիկունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց Առաւանայ ուրումն»: Պատմութիւն էջ 13—14. Վենետիկ 1894:— Հմմ. Խոր. Բ, կա, 139. Գ, իբ, 207—208, ևս Խոր. Բ, ը, էջ 81:

2 «Ե (6) Շահապն Ծովաց տէր» Ալիշան. Այրարատ էջ 430:

3 Փ. Բուզ. Գ, իբ, 146:

4 Փ. Բուզ. Գ, թ, էջ 21: Հմմ. Գ, ժբ, էջ 29: Եւս մեր «Արարատ». փետր.—մարտ. մեր յօդուածը «Պատմագիրք Հայոց» էջ 248—249:

5 Փ. Բուզ. Գ, ժբ, էջ 29:

6 «Դանիէլ մեծ իշխանն Ծովաց . . . և Նոյն(°) իշխանն միւսոյ Ծովաց» Փ. Բուզ. Գ, դ, էջ 72—73: Վենետիկի վերջին երկրորդ հրատարակիչները վերջին անունը Ինճիճեանի պէս կարդում են ոչ թէ Նոյ, այլ Նոյն, (Ստորագր. Հ. Հայաստ. Զորրորդ Հայք, Ծովք, էջ 48): Նոյ հայ նախարարի անուն մեզ չէ պատահել թէև, իսկ Նոյնը իբրև յատուկ անուն չգիտեմ թէ ո՞ր ազգի մէջ կայ իւր համապատասխան բառով:

էին, Անգեղ տուն, Պաղնատուն, Հաշտեանք, վերջնում կային և Արշակունիք, ինչպէս և Աղիովիտ և Առքերանի գաւառներում: Վաստակականը որ Արծրունեաց «բարձրագոյն և սեփական նահանգ»¹ է կոչուում, վերեր տեսանք թէ որքան ենթարկուած նախարարութիւններ ունէր բացի իւր երեք ճիւղաւորութիւնից: Արդէն առաջին հայեացքից

Մեզ թուում է Նոյ-ի 6 դիմորոշ յօդը արտագրողին պէտք է վերագրել, որ խառնել է դերանուան հետ, ինչպէս որ ունին «իշխանն, տանն, այնքան անգամ գործածուած անունները և չունի ոչ մի յատուկ անունն: Բերենք այդ վկայութիւնն ամբողջապէս. «Զնայր մեծ իշխանն մարդպետութեան, և զԲագարուս մեծ իշխանն ասպարապետութեան (°°°), և զԴանիէլ մեծ իշխանն Ծովաց, և զՄհանդակ Ռըշտունի, և զԱնդուկ իշխանն Սինեաց, և զԱրշաւիր իշխանն Շիրակաց և Արշարունեաց, և զՆոյն իշխանն միւսոյ Ծովաց և զՊարգե իշխանն տանն Ամատունեաց»: Ներսէսին Կեսարեայ ուղեկցող այս Բագարաւոր յիշում է «Բագրատ Բագրատունի» (Փ. Բուդ. Դ, է, էջ 17) ազգանունով: Մինչդեռ Մ. Երէց այդ առթիւ յիշում է «զիշխանն Բագրատունեաց Դաւիթ» (Սովեբք 2, դ, էջ 24), իսկ «Բագրատ Գահապետ Բագրատունեաց» և նոյն «Բագրատ Բագրատունեաց իշխանն» յիշում է Ներսէսին Կ. Պոլիս «կայսերական պաղատան» ուղեկցողների և նորա թունաւորման ներկայ եղողների թուում (Սովեբք 2, Ը, էջ 53. և ԺԲ, էջ 88):

Արդ թէ Փ. Բուդանդը և թէ Մ. Երէցը սպարապետութիւնը իւրեանց պատմագրութեան մէջ անդադար և միշտ սեփական են համարում Մամիկոնեանց, որ ապացուցուած է հայերէն, յունարէն և արաբերէն Ագաթանգեղոսով ևս հակառակ Մ. Խորենացու: Տիւրքինգէնի համալսարանի ուսուցիչ Մարքարտն այս խանգարմունքն ուղղում է այսպէս. «ԶԲագարատ մեծ իշխանն ասպ[ետութեան և զՎասակ մեծ իշխանն ասպ]արապետութեան» (Eranšhr. էջ 167. Berlin. Թարգմանուած Հանդէս ամսորեայ, 1903. Թիւ 1, էջ 2, ծանօթ. 3):—Շատ յաջող է այս, որովհետեւ քիչ վերե Բուդանդը պատմում է Մամիկոնեանց վերագարծը Տայրից Արշակ Բ-ի ձեռքով, որ Վարդանին նահապետ է հաստատում, իսկ «զՎասակ զմիջին եղբայրն՝ զԻւր զայեակն ի ասպարապետութիւնն զօրավարութեան . . . կացուցաներ» (Փ. Բուդ. Դ, Բ, էջ 67):

1 Թ. Արծր. Դ, իթ, 266:

և եթ այս բանն անհնարին է ենթադրել, վասն զի Մեծ Հայքի նահանգները 15 են, մինչդեռ նախարարութիւնները բազմաթիւ։ Աւելի շատ գաւառների և նախարարութեանց թիւը մօտաւորապէս հաւասարուում են։ Չնայելով այս աչքի ընկնող հանգամանքին նոյն իսկ գաւառները ամբողջապէս այս կամ այն նախարարական տան չեն պատկանում։ Այսպէս Հաշտեանքն ունի Դ. դարում Խոսրով Կոտակի ժամանակ առանձին նախարարութիւն. «Գագ իշխանն Հաշտենից»¹ Կոստանդիանոս Մեծի որդուն Կոստանդի մօտ պատգամաւոր դնացող երկու իշխաններից մինը. նոյն դարում Խոսրովի որդու և յաջորդի ժամանակ յիշուում է «Գնիթ իշխան Հաշտենից գաւառին ի Կամիւնական»² տոհմէ։ Սակայն Հաշտեանքում Վաղարշակի ժամանակից ապրում էին Արշակունի³ արքայազունքը, ինչպէս և յետոյ Տրդատ-Արտաշէսի որդի Արտաւազդի ժամանակից Աղիովիտ և Առբերանի⁴ գաւառներում։ Իսկ Տարօն գաւառում միաժամակ կալուածք ունին Լուսաւորչի տոհմը, որ ունի և այլ գաւառներում⁵, Մամիկոնեանք և Հայր մարգպետը⁶, Վերջինս թերևս իբրև արքունի գործակալ, ինչպէս երբեմն Դրաստամատը Տիրանի և Արշակի ժամանակ Անգեղ տան, Անգեղ և այլ բերդերի և Ծովագ երկրի Բնաբեղ բերդի⁷, սակայն այսու չէ փոխուում մեր վարկածը, ապա ուրեմն թագաւորն ունէր կալուածներ այդ գաւառներում։ Այսպիսով ոչ միայն մի գաւառ ամբողջապէս մի նախարարութեան չէ պատկանում այլ և հետևում է, որ ոչ միայն արքունիքը, այլ և Լուսաւորչի տոհմը և այլ նախարարութիւններ ունին շատ

1 Խոր. Գ, Գ, 190:

2 Փ. Բուզ. Գ, ԺԲ, 29: «Վարազ Կամիւնական» զինակիր Վաչէ Մամիկոնեանի: Բուզ. Գ, է, էջ 17:

3 Խոր. Բ, Ը, 81:

4 Խոր. Բ, Կա, 138:

5 Փ. Բուզ. Գ, ԺԳ, էջ 117:

6 Փ. Բուզ. Ե, Գ, էջ 195:

7 Փ. Բուզ. Ե, է, էջ 210—211:

գաւառներում կալուածքներ:

Առհասարակ Հայոց նախորարութեանց ամենամեծ մասը կենդրոնացած են Արարատ, Տուրուբերան և ապա Վասպուրական նահանգներում, այնուհետև մասամբ Ծովաց աշխարհում և Բարձր Հայքում, իսկ մնացեալ եղբրական Աղձնիք, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք և Տայք նահանգներին մեծ մասն ունին մէկ համանուն և մէկ-երկու այլ նախորարութիւն, ինչպէս այդ երեւում է այս նահանգների գաւառների անուններից, որոնց մեծ մասի անունով նախորարութիւններ չկան: Տայքի գաւառներն են Կող, Բերդացիոր կամ Բերդափոր, Պարտեզացիոր կամ Պարտեզափոր, Ճակք կամ Ճակտտք կամ Ճակտոտ, Բուխա կամ Բոխա, Ոքաղէ կամ Ոքաղ կամ Ուքաղի և Ազորդու Կափոր կամ իսկապէս մի գաւառ Ազորդացիոր: Ասեացիոր կամ Արսեացիոր կամ Ասրեաց փոր¹: Արդ խնդիր է թէ այս բոլոր գաւառներն էլ կամ այսպէս անոնք ամբողջ Տայք նահանգը պատկանում էր Մամիկոնեանց: Այս գաւառներից Ոքաղը Փարպեցին յիշեց երկու գիւղով. բայց չէ տալում յատկապէս թէ Մամիկոնեաներինն է, մինչդեռ ուրիշ առթիւ, Ծաղիկ գիւղի համար շեշտում է որ էր ընդ իշխանութեամբն Մամիկոնէից², սակայն այս գիւղը՝ ըստ ամենայն հաւանականութեան Տարօնում էր գտնւում, որ Հաշտենից սահմանակից էր, ուր Վահան կամենում էր անցնել օգնութիւն գտնելու: Այստեղ յատկապէս յիշելը անշուշտ այն մտքով է, որ այդ կողմերն ուրիշներն էլ կալուածքներ ունէին, ինչպէս որ մասամբ վերևը տեսանք. իսկ Տայքում ոչինչ չյիշելը աւելի շուտ մի argumentum e silentio այսինքն լուռ ապացոյց պէտք է համարել, մանաւանդ թէ ի նկատի առնենք որ Փարպեցին յատկապէս չէ շեշտում, թէ Տայքը Մա-

1 Հ. Հիւրշման Die Altarm. Ortsnamen. IV. Abschnitt, XIV. էջ 359—360: Հմմ. Իսճիճեան Ստորագրութիւն Հ. Հայաստ.

2 Ղ. Փարպ. Գ. ձա, 148:

միկոնեաններինն է. Մեր վերև բերած ապացոյցները բաւական են այդ հաստատելու, և եթէ մի մեծ կալուածական փոփոխութիւն տեղի ունեցած լինէր մինչև ե. դարու վերջը, որևէ ակնարկ կը լինէր Փարպեցու և կամ միւս հեղինակների մէջ:

Միակ հաւանական ենթադրութիւնը, որ կարելի է անել, այդ Բոխա կամ Բուխա գաւառի մասին է: Վաւական գահնամակում յիշում են «Լգ՝ Դիմաքսեանն, Լե՝ Բուխա Դիմաքսեան, Լէ՝ Այղ Դիմաքսեան, Կէ՝ Շիրակա Դիմաքսեան»¹. Ուրեմն ինչպէս մեր ուրիշ նախարարները, այնպէս էլ Դիմաքսեանները ունէին իրենց ստորաբաժանումները՝ երկրորդական ճիւղերը, ինչպէս որ վերևը տեսանք, Դիմաքսեանց երկրորդական² ճիւղերը հաստատուում են և եղիշէի խօսքերով: Շիրակա Դիմաքսեան ի հարկէ կոչուել են միւս ճիւղի ուրիշ տեղի Դիմաքսեաններից զանազանուելու համար, որովհետև մինչդեռ միւս նախարարութեանց երկրորդական ճիւղերը կոչուում են սովորաբար «Այղ»: Այլ և կամ նախարարութեան անուան կցում են «երկրորդն», «երրորդն», այստեղ Դիմաքսեաններն ունին մի «Այղ Դիմաքսեան», ճիւղաւորութիւն, երկուսն էլ կոչւում են գաւառների անուններով և այս հաւանօրէն այն պատճառաւ, որ երևի միմեանցից բոլորովին անկախ են: Այս աւելի վաւերական է դառնում շնորհիւ այն հանգամանքի, որ զօրանամակում³ մեր գահ-

1 Ալիշան Այրարատ 431:

2 Եղիշէն Վարդանի հետ Աւարայրի դաշտը գիմոդների մասին ասում է. «Սև փութով ամենեքեան հասանէին իւրաքանչիւր գօրօք» ապա թուում է անունները ըստ կարգի 7 «Թաթուղ Դիմաքսեան», 14 «Հմայեակ Դիմաքսեան», 15 և միւս եւս այլ Դիմաքսեան «Գաղրիկ» (Եղիշէ ե. էջ 153—154): Այստեղից կարելի է հետևացնել, որ Դիմաքսեանները բացի գլխաւոր նախարարութիւնից, եթէ ոչ երկու՝ գոնեա մի երկրորդ նախարարութիւն ևս ունէին:—

3 Զօրանամակ կոչում ենք Շահխաթունեանի 86 նախարարութեանց ցուցակը իւրաքանչիւրի դօրքի քանակով (Ստորագր.

նամակի ութ ճիւղաւոր նախարարութիւններէց, ինչպէս և Առաւելեանք կամ Առաւելեանք և Պալունիք չեն յիշուում իրենց երկրորդական ճիւղաւորութիւններով, իսկ զօրանամակի հիւսիսային դռան «ԺԳ. Դիմաքսեան յ ($=300$) և Բուխա Դիմաքսեանն է հիւսիսային դռան» ԺԵ. Բոխայեցի յ ($=300$), որոնք բանակին մասնակցում են 300-ական մարտիկներով, Հետաքրքրական է, որ և Խոսրովական և Վաւաւական գահնամակում և զօրանամակում Մամիկոնեանք և Տայք կամ Տայեցիք ջոկ ջոկ նախարարութիւններ են համարուում:

Այսպէս Խոսրովականի Թ $=10$ ՝ Մամիկոնեանք և Թ $=80$ Մամիկոնք երկրորդ, իսկ Թ $=75$ Տայք¹. Վաւաւականի Դ(5) Մամիկոնէից տէր, ԼԱ՝ Մամիկոնէից երկրորդն և ԺԹ(20)՝ Տայոց (տէր)². իսկ զօրանամակում երկուսն էլ հիւսիսային դռան այսինքն բանակ կազմող նախարարութիւններէց են Զ. Տայեցի Ո $=600$ և է՝ Մամիկոնեանն Ռ $=1000$ մարտիկներով³:

Զօրանամակում չկայ Մամիկոնեանց երկրորդական ճիւղի մասին, հետեւաբար միասին մի դռնդ էին կազմում և հաւանօրէն երկրորդները ենթարկուում էին առաջիններին գէթ զինուորական մասում. նոյնը կարելի է ասել և միւս նախարարութեանց համար. իսկ Մամիկոնեանք և Տայեցիք անշուշտ անկախ են, որ երեք նամակներում ջոկ ջոկ յիշուում են և զօրանամակին նայելով անկախ են իրարից և առանձին առանձին դռնդ ունին: Տայեցին հաւանօրէն համանուն երկրի նախնական ազատանին է. Տայքը կամ Տայեցիքն ունին առանձին իշխան, որ ներսէս Մեծին Կեսարիա ուղեկցող 26 նախարարներից վերջինն է «Գաղարիկ իշխան Տայոց», մինչդեռ առաջինը

II, էջ 58-ի և 59-ի միջև): Այս ցուցակն արտատպել են Կ. Կոստանեան Հիւսուածքում (III, էջ 32-ի և 33-ի միջև) և Ղ. Ալեշան Այրարատում (էջ 424-ի և 425-ի միջև):—

1 Սոփեբք 2, է, էջ 32—35:

2 Ղ. Ալեշան, Այրարատ, էջ 430—431:

3 Շահաթուհեան Ստորագր. II, էջ 58-ի և 59-ի միջև:

«գորավարն Շահէն ի Մամիկոնէից տոհմէ»¹։

Վերոյիշեալներէից պարզուում է. ինչպէս Մամիկոնեանք և Տայեցիք, այնպէս էլ Դիմաքսեանները և Բոխա-Դիմաքսեանները կամ Բուխայեցիք անկախ են միմեանցից, գտնեա աւելի քան իրենց երկրորդական ճիւղերն են— Ըստ ամենայն հաւանականութեան Բոխա անունը կապ ունի Վոհի² հետ, որ ձորոխ գետն է։ Հաւանօրէն այդ մի ցեղ է, որի անունը մնացել է գետին և գաւառին, ինչպէս որ Փաղիսների³ անունը մնացել է Երասխի սկզբնական հոսանքին և Բառեան գաւառների վրայ։

1 Ստեբը 2, գ, էջ 24—25։

2 Հայր Արսէն Ստեբն Geographie de Moïse de Corène և Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ Վենետիկ 1881. էջ 28 § Ե Վերք-ի տակ կարդում ենք «Սկոնալ ի Վոհ գետոյ և ի հիւսիսոյ Տայոց»։ § Եբ, էջ 30 «Ակամսիս որ է Վոհ ի հիւսիս»։ ուստի սխալ պէտք է համարել Յոհ ձևը։ էջ 27 § ԺԹ, Կողքիս-ի տակ «ՂԱկամսիս որ է Յոհ»։ կամ էջ 35 § ԺԵ, Տայքի-ի մէջ «Եւ քսա հարաւոյ Բուխա և Ագորգացիոր, իւրեանց գետակօք, որք . . . իջանեն ի Յոհ . . . ընդ որ իջանէ Յոհ, գաւաղ ի Սպերայ . . . զոր Եգերացիք կոչեն Ակամսիս և Խաղղիք Կահամար»։ Ի նկատի առնելով որ Ֆրանսերէնում էջ 38, Ակամսիսի բացատրութիւնը «որ է Յոհ», երևի իբրև ընդմիջարկութիւն, բայց է թողնուած, և վերջին անգամ իրար ետեից «Յոհ»-ը Ֆրանսերէնում էջ 46 «Voh» է թարգմանուած, պէտք է կարծել թէ Յոհ տպագրական սխալ է։ Բոխա ձևը այս պատճառաւ ճշտագոյն է, ինչպէս որ ունի Պաղտմէորը. «Հ. Հիւրչման Altarm. Ortsnamen էջ 212 և 359)։

3 Հ. Ղ. Ինճիճեանը իւր «Հնախօսութիւն» I, էջ 142—148 ճշնում է ապացուցանել, որ ձորոխը Ս. Գրքի Փիտոնն, է, և ոչ թէ Փարշ-Ռիոնը. վերջինիս մասին ոչինչ չունինք ատելու, իսկ առաջինը չենք կարող ընդունել։ Առաջինը որ մեր մատենագրութեան մէջ և ոչ մի հետք կայ այս ենթադրութեան։ Երկրորդ Ստրաբոնը և մանստանդ Պլինիոսը շատ մշուշ գաղափար ունին Հայաստանի աշխարհագրութեան մասին։ Այսպէս Ստրաբոնը, որ Հայաստանը աւելի լաւ պիտի ճանաչէր, ասում է «Ողական և Բողբերդ ոչ հեռի յԱրաշատէ (°°) և Արազէրք առ Եփրատաւ» (=Արածանի) (Ստրաբոն ԺԱ, 14, 16։ Տես Գաբազաշեան Քննական Պատմ. Հայոց II, Թ, § 12, էջ 136.) և այլն։

Այլ է ընկնում մի կողմից եւրոպայի թրակացի Դա կամ Դակ, ըստ Կիպերտի Գէտ,¹ և Ասիոյ սկիւթացի Դա² կամ Դահը³ ժողովրդի անունների նմանութիւնը, մանաւանդ որ վերջինից հիւսիս յիշուում է Մասագէտ: Միւս կողմից չունին արդեօք որ և է առընչութիւն այս անունները և մեր Տայքը:

Զաւեստայի և Հերոդոտին Դահա-ն և սկիւթացի Սակա-ն մի և նոյն ժողովուրդն է, իսկ վերջինս յայտնի է Գիմիրրի՝ կամ յունական Կիմմէրի անունով, որ կոչուել է

Ըստ Սարաբոնի (ժա, 529) Հայաստան աշխարհի Պանտո ծովը թափող յայտնի գետերից են Փասիս և Լիգոս, որ է Փոքր Հայքի Գայլ գետը (Ինճիճ. I, 14 էջ 143): Վերջինս գոնեա ահ- ներև ոխալ է: Երբորդ Ֆազիսը շփոթել են երբեմն Ակամսիոն — ձորսի ներքին ընթացքի հետ, ինչպէս Պրոկոպիոսը (Altarm. Ortsnamen IV, Տայք, էջ 358): Վերջապէս Բոենոֆոնն Անաբա- ղիսից պարզ երևում է, որ գոնեա նորա Ֆազիսը Արազի վերին ընթացքն է, որտեղ գտնւում են մեր երկու Բասեան գաւառ- ները (Հմմ. Friedrich Lübker Reallexikon des klass. Altertums 1891. Phasis. էջ 925: Հ. Լիւբքման Altarm. Ortsnamen I Abschnitt էջ 207—208),

Հ. Գարեգին Վ. Յովսէփեանը յիշում է 626 թուին Լազսա- նում Ֆազիսի մի եպիսկոպոս Կիրոս անունով (Die Entstehungs- geschichte des Monotheletismus, էջ 16, 44—45. Leipzig 1897): Ինճիճեանն յիշում է «ի Դ. ժողովն Կոստ. [անդնուպոլիս՝ 869] Թէոդորոս եպիսկոպոս Փասիսի ի Լազիկիա» (Հնախօսութիւն I, 2, էջ 146): Ի նկատի առնելով և Լիւբքէրի պնդումը հակառակ Ինճիճեանի, թէ յետոյ Ֆազիս անունով անտարակոյս հասկաց- ւում էր Ռիոնը, միևնոյն անունով կոչուել է հնում այժմեան Փոթին, և այս երկուսի անունը մ'նացել Փասեան թաւանի՝ Phasianae aves վրայ, պէտք է ենթադրել թէ Ֆազիս-Փասեան ժողովուրդը հիւսիսից Հայաստան գալով իր հետքերը թողել է և այդ աեղերում:—

1 Δάος=Davus, Γέτης=Geta. Lehrbuch der Alten Geographie, § 301, § 307, էջ 305—307, Berlin 1878:

2 Iran, Philol. II, էջ 401. 445. Strassburg. 1896—1904:

3 Δάα=Dahae. Fried. Lübker. Reallexikon des klass. Altertums, Leipzig, 1891:

և Duchա կամ Gucha ¹:

Այս նոր ժողովրդի հաւանօրէն տարբեր ցեղերը հիւսիսից յարձակուել են Հայաստան: Կիմմէրները, Ըստ Կիպերտի, դեռ Թ. դարում Ն. Ք. այլ և 679-ին Կապադովկիա ² են արշաւել, իսկ 624-ին Մարաստան, Փոքր-Ասիա, Ասորիք մինչև Եգիպտոսի սահմանները երկար ժամանակ Արդ Կապադովկիան հայերս կոչել ենք և Գամիրք, ունինք Տուհը ³ գաւառ, որ գուցէ Duchա-ի հետ կապ ունենայ. այլև Շակաշէն կամ Սազաշէն (=Շաքի): Իսիդորոսը յիշում է Սագաստանում Բարդա, որ ինչպէս Իճիճեանը նկատել է, մօտ է Պարտաւ անուն ⁴, որ սակայն այժմ կոչւում է Բարդա ⁵: Հ. Կիպերտը հաւանական է համարում որ Սակերի պէս Կասպ ժողովուրդն ևս թուրանական ծագումն ⁶ ունի, համանուն ծովով անցնելով հաստատուել է մեր Փայտակարանում:

Այսպէս էլ գուցէ և մեր Բասեան և Տայք գաւառի և նահանգի նախնական բնակիչները սկիւթական ծագումն ունին: Տայքը Քսենոֆոնը կոչում է Τάοχοι, իսկ Ստ. Բիւզանդացին և Τάο ⁷, վրացերէն Տաոս-կարի կամ Տաւաս-գերդ, որտեղ կարծես խառնուած են Դահը և Duchա անունները: Դու կամ Տու անունով երկու գիւղ գտնուում են Բասեան գաւառում, որ սահմանակից էր Տայքին, որոնք դաշնակից էին միմեանց Քսենոֆոնի ժամանակ:

1 Heinrich Kiepert, Lehrbuch, § 91, էջ 91:

2 Iran. Philol. II, էջ 408, 412:

3 Խորենացի Բ, ԿԵ, էջ 144:

4 Հ. Հայաստ. Շակաշէն, էջ 341:

5 Արդեօք Աղուանք, Ուտէացիք, Գարդմանացիք, Մովղէացիք և Գարգարացիք (Խոր. Բ, Ը, էջ 78), սկիւթացի չէն: Սոցաբոլորին Խորենացին ցեղակից է համարում և առաջիններին ահանարկելով ասում է ս. Մեսրոպի մասին. «Ստեղծ զնշանադիրս կոկորդախօս, աղխազուր, խժական խեցրեկագունն այնորիկ գարգարացւոց լեզուին» (Խոր. Գ, ծդ, էջ 248):

6 Lehrbuch § 84 էջ 82—83:

7 Հիւրշման Altarm, Ortsnamen էջ 277:

Բացի այդ՝ Դահա ժողովրդի մասն էր Պարն¹ Արշակունեաց հարստութեան ցեղը, որ ըստ Ստրաբոնի կոչւում են Դա[հ]ք Պարնեանք, որոնք «Հատուածեալ են ի Դաոց բնակեցոց ի վեր կայս Մէսաիս (ծովուն)», և սորա ըստ Ինճիճեանի² մեր Տայքը պիտի լինին:

Այս տեղից հետևում է, որ անհիմն է այս ենթադրութիւնը, մանաւանդ որ ունինք մի նախարարութիւն Բառնէից³ անունով, որ եթէ ոչ Տայքի, գէթ Դուհը-Պարնի

1 A. Gutschmid Gesch. Irans, էջ 29, Tübingen 1888

2 Հ. Հայաստ. Տայք, էջ 368:

3 Ներսէս Մեծի հետ Վաղէսի մօտ գնացող տասնութ նախարարներէց և. է «Կէշկէն նահապետն Բառնէից» Ստր. 2, ք, էջ 52: Փ. Բիւզանդն այս առթիւ յիշում է միայն 9 նախարար, որոնք ընչին տարբերութեամբ Մ. Երէցի յիշած սկզբի անուններով են, է. է «Կիշկէն նահապետն Բաղէնից» Փ. Բուզ. Դ, ժա, էջ 106: Բաղէնից նախարարութիւն և այն էլ միայն այս տեղում. իսկ Մ. Երէցը յիշում է Խոսրովեան դահնամակի 84-րդ տեղում «Բադուանք» (էջ 35), որ գուցէ Փ. Բիւզանդի Բաղէնից-ը լինի: Միւսնոյն ժամանակ նկատենք, որ սորա կարող են և երկու տարբեր նախարարութիւններ լինել:—

Կայ և մի այլ նախարարութիւն Բարմայք, Բարմայք կամ Բարմայիք (Մ. Երէց, Ստրեբք 2, է, էջ 38 162-դը և էջ 130): Ներսէս Մեծին Կեսարիա ուղեկցող 26—27 նախարարներից 21-ին է «Սադ կամ Սէդ իշխանն Բարմայ» (Ստրեբք 2, դ, էջ 25, որ Փ. Բուզանդը չունի: Խոշոր տարբերութիւն կայ առհասարակ երկուսի մէջ, ինչպէս և այլ ցանկերում. Հմմ. Փ. Բուզ. Դ, դ, էջ 72—73): Արդեօք այս երկու նախարարութիւնները նոյն են, չենք համարձակւում պնդել լոկ անունների նմանութիւնից: Վերջինիս տեղը որոշակի յայտնի է «Կատարեցաւ Բարթողոմէոս, յԱբղանոս քաղաքի, ի Բարմա անուանեալ տեղւոջն յանուն(!) առաքելոյն»: (Խոր. թուղթ Առ. Ս. Արժրունի, մատենագրութիւնք էջ 295): Ըստ Ինճիճեանի Տէր Իսրայէլ Յայսմաուրբի հեղինակ ասում է Դեհտ. ԺԺ. «Թաղեցին զնա հուպ ի քաղաքն Աբղանոս, որ կոչի Բարմ» (Հ. Հայաստ. էջ 510): «Փիլիպպոս կաթողիկոսն էր յերկրէն Բարմայ, որ այժմ ասի Աղբակ» (Առաքել Դաւրիթեցի Իե, էջ 314, Վաղարշապատ 1896): «Եւեալ գնացին յերկիրն Բարմայ, որ այժմ ասի Աղբակ» (Առ. Դաւրիթ. ԽԼ, էջ 552): Կարծում ենք այս իշխանութիւնը կանգուն էր

հետ կապ ունի: Պարթևների սկիւթական¹ ծագումն յայտնի է, և պարթև Կարէնի, Սուրէնի և Կամսերական ու Պահլավունի ցեղերը ունէին իրենց ճիւղերը Հայաստանում և կամ միայն այդտեղ էին ապրում, հաւանորէն ուրեմն ունեցել են և Պարսեանք: Այսպիսով աւելանում են մեր օտար և պարթևական նախարարութեանց վրայ և Բառնեանք, որոնց մասին յիշատակում է միայն Մեսրոպ Երէցը հակասելով Փ. Բիւզանդին:

Այսպիսով ուրեմն Տայքում լինում են Մամիկոնեանք, Տայեցիք, Բոխա-Ղիմաքսեանք կամ Բոխայեցիք, գուցէ և Բառնեայք, որ չունի զօրանամակը: Հետաքրքրական է յամենայն դէպս այն, որ ոչ միայն առաջին երեք նախարարութիւններն, այլև Ղիմաքսեանք պատկանում են Հիւսիսային դռան կամ զօրաբանակին:

Այժմ ուրեմն պարզ պէտք է լինի, որ ամբողջ Տայքը չէր պատկանում Մամիկոնեանց, թէկուզ Դ. դարում, ինչպէս ասում է մեր յարգելի ուսուցչապետ և բարեկամ պ. Հ. Հիւբշմանը: Վասն զի նախ այդ դարուց յետոյ այլևս նոր նախարարութիւններ չեն կազմուել, ինչպէս որ կարելի է տեսնել Ե. և յետագայ դարերի պատմագրերից: Ապա Դ. դարու թագաւորները Խոսրով Բ. Կոտակ, Տիրան, Արշակ և Պապ ձգտում են նախարարութիւնները ջնջելու և կալուածատիրութիւնը նուազեցնելու. այնուհետև էլ ոչ զօրութիւն, ոչ էլ երևի իրաւունք ունէին հները ջնջելու կամ նորերը հաստատելու, քանի որ ստուեր թագաւոր-

մինչև Թ. դարը: Թ. Արծրունին յիշում է «Գորգ Հարմացի» (Բ, գ, էջ 109), որ պիտի լինի Բարմացի, մանաւանդ Գորգի հետ յիշուած ընդ որ միւս նախարարութիւնները ևս Վասպուրականի հպատակներից են, իսկ Մեծ Աղբակը, հին Արապախիտիքը, Վասպուրականի դաւառներէից մինն է:—Արդեօք երկու պատմագրի Բարմա թէ Յայսմաւուրքի Բարմ ձեն է ուղղագոյնը, դժուարանում ենք ասել: Հաւանական է որ Բարմա ձեն է ճշտագոյնը, եթէ ի նկատի առնենք, «Բարմայիք» փոփոխակը:—

1 Տես և Հ. Կիպերտ, Lehrbuch der Alt. Geograp. § 69, էջ 69—66:

ներ էին դարձել: Գալով Մարգարետունի, Պահլաունի և Շերեփեան ըստ երևութին նոր նախարարութեանց կամ բացառիկ երեյթներ են, կամ աւելի ճիշտ հեշտութեամբ բացատրուում է սոցա հնագոյն ծագումը:—

Մամիկոնեանց «այլ տուն»¹ Տարօնի և միւս կալուածքների մասին կը խօսենք ուրիշ անգամ:

Սեփակ Կանայեանց.

12 մարտի 1907 թ.

Վաղարշապատ:

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ *

1. Վաս. Նեմիրովիչ—Դանչենկո. Հայուհի Գայիանէն. Թարգ. Արսէն ոսրկաւադ Սիմէոնեանց, Մոսկուա, 1907 թ.
2. 1896 Թուին Ս. Էջմիածնում գտնուած հին պղնձեզէն ամանների ցուցակը և արձանագրութիւնները. կազմեց Գալուստ Տ. Մկրտչեան օժանդակութեամբ Սահակ վարդ. Ամատունու. Պարիս, 1906:
3. Դուկա. Յովհ. Արթինեան. Տունկերը և անոնց հայերէն անունները. Փարիզ, 1906:
4. Հայք ի Կ. Պոլիս քսաներոգ դարու սկիւրը գրեց Արծրունի. Փարիզ, 1906:
5. Մ. Յովհաննիսեան, Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները (Յառաջի գրադարան). Տփլիս, 1906:
6. Известія Кавказскаго отдѣла императ. русск. географическаго общества. Т. XVIII. 1905—1906, Тифлисъ, 1906.
7. Die ostarmenischen Laute des 15. Jahrhunderts nach den Transcriptionen in Hans Schiltbergers Reisebuch. Von F. N. Finck,

1 Փ. Բուզ. Գ, Ժը, էջ 47:

* Ստացուած գրքերի համար այսուհետեւ կանոնաւոր կերպով դրախտումներ կգրուին: